ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ>> հիմնադրամը (այսուհետ՝ Քոլեջ) հայտարարում է մրցույթ՝

- ✓ *«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության մասնագիտական մոդուլներ պարապող մանկավարժի թափուր տեղը համալրելու համար:*
- ✓ *«Ֆիզիկական կուլտուրա» առարկա պարապող մանկավարժի թափուր տեղը համալրելու համար:*
- ✓ *«Խոհարարական գործ» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղը համալրելու համար:*

➢ Սահմանված պահանջները՝

Համապատասխան մասնագիտական կրթության որակավորում կամ՝

ա) վերջին 10 տարվա ընթացքում 2 տարվա տվյալ մասնագիտությամբ աշխատանքային փորձ,

բ) վերջին 5 տարվա ընթացքում տվյալ մասնագիտությամբ վերապատրաստման վկայական՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված ուսուցման ծրագրով:

➢ Սահմանված փաստաթղթերի ցանկը՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

➢ Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են Քոլեջում՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ:

➢ Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 11-ին, Քոլեջում:

➢ Հասցեն՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 5:

☎ Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի № 48-Ն հրամանին կամ զանգահարել (0263) 4-36-59, (094) 000415 հեռախոսահամարներով: